

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ես՝ Միշա Ստեփանի Խոտավերոյանս, 2019 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 6-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. 2019 թվականի նոյեմբերի 18-23-ը Ստրասբուրգում մասնակցել եմ Եվրոպայի խորհրդի «Վերջ երեխայի սեռական առցանց շահագործմանը և բռնությանը» վերտառությամբ ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ազգային համակարգողների խորհրդի երկրորդ հանդիպմանը և «Օկտոպուս» միջազգային համաժողովին՝ ուղղված համագործակցությանը ընդդեմ կիբերհանցավորությանը:

Ծրագրի ազգային համակարգողների խորհրդի երկրորդ հանդիպման ժամանակ Ծրագրին մասնակից երկրների կողմից ներկայացվեցին հաշվետու ժամանակահատվածում խնդրո առարկա ոլորտում իրականացված քայլերը և արձանագրված արդյունքները, ինչպես նաև Ծրագրի հետագա ժամանակահատվածի համար նախատեսվող միջոցառումները և թիրախային ցուցանիշները:

Հատկանշական է, որ Ծրագրի ազգային համակարգողների խորհրդի երկրորդ հանդիպման ժամանակ ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված երեխաների սեռական առցանց շահագործման և բռնության դեմ պայքարին ուղղված քայլերը, այդ թվում նշելով, որ 2019 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագծի ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը, և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից

դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանն որոշելուց հետո այն կվավերացվի Ազգային ժողովի կողմից:

Համաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել երեխայի սեռական առցանց շահագործման և բռնության դեմ պայքարի հիմնախնդիրներին, այդ թվում՝ երեխայի սեռական առցանց շահագործման և բռնության դեմ պայքարում միջգերատեսչական և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության դերին և նշանակությանը, ներպետական և միջազգային մակարդակում զոհերի պաշտպանության առկա կառուցակարգերին, նրանց նույնականացմանը, երեխայի սեռական առցանց շահագործման և բռնության դեպքերի բացահայտման հիմնախնդիրներին, ինչպես նաև խնդրո առարկա ուղրտում իրազեկվածության ծրագրերի իրականացման դերին և նշանակությանը:

Համաժողովի ավարտին ներկայացվել են Ծրագրի իրականացմանն առնչվող հետագա գործողությունները: Մասնավորապես ներկայացվել է, որ Ծրագիրն ունենալու է շարունակություն «Վերջ երեխայի սեռական առցանց շահագործմանը և բռնությանը +» խորագրով:

2. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի «Սպանդարյան» կայարանի երկաթգծին հարակից 15 հա հողատարածքը շուրջ 1100 անձի համար նախատեսված նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրելու նպատակով, շուրջ 5 ամիս բանակցություններ եմ վարել շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ, ներկայացրել տեղեկատվություն ՀՀ վարչապետի աշխատակազմ, և որպես վերջնարդյունք մշակել ու ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացրել «Գույքի նվիրատվության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

3. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից կազմված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում իրականացվող շինարարական աշխատանքների մշտադիտարկման ընթացքում

արձանագրված արդյունքների վերաբերյալ» վերտառությամբ տեղեկանքով բարձրացված հարցերի շուրջ կազմել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել պատասխան նախագիծ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անձնակազմի կառավարման, առաջին բաժանմունքի և հաշվապահական հաշվառման գործունեության ուսումնասիրության արդյունքներով բարձրացված հարցերի շուրջ կազմել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել պատասխան նախագիծ:

4. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող և հեպատիտ Յ վիրուսով տառապող բոլոր անձանց անհրաժեշտ բժշկական օգնություն ու սպասարկում տրամադրելու հարցում երկարաժամկետ բանակցություններ եմ վարել ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում ձեռնարկվել են անհրաժեշտ հետազոտություններ:

5. Ներկայացրել եմ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2019 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները:

6. Մասնակցել եմ, 2019 թվականի նոյեմբերի 1-ին մեկնարկած ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի առաջնահերթություն հանդիսացող միջոցառումների թիրախավորման աշխատանքներին և օժանդակել ծրագրի իրականացմանը:

7. Մշակել եմ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշումից բխող նախագծերը. 5 նախարարի հրաման՝ 35 հավելվածով՝ շուրջ 300 էջ

ծավալով: Հատկանշական է, որ «Կալանավորված անձի կամ դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտի, հիվանդության պատմագրի, հիվանդության պատմագրի (բժշկական քարտի) քաղվածքի, խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման և դեպքերի արձանագրման ձևերը և դրանց լրացման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծը ևս ընդգրկված է եղել նշված ցանկում:

8. Կազմել և ՀՀ ՄԻՊ աշխատակազմ եմ ներկայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թվականի տարեկան հաղորդման և զեկույցի կազմման համար ՀՀ արդարադատության նախարարության տիրապետման տակ գտնվող անհրաժեշտ տեղեկատվությունը:

9. Մշակել և շրջանառել եմ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն կալանավորված անձի ծանր հիվանդության (խանգարումներ, վիճակներ) հետևանքով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության վերաբերյալ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալին ծանր հիվանդության (խանգարումներ, վիճակներ) հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ եզրակացություն տվող բժշկական հանձնաժողովի, դրան կից աշխատանքային խմբի գործունեության կարգը և վարձատրության չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

10. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ

մատուցող կազմակերպության **աշխատակիցները կընդգրկվեն սոցիալական փաթեթի շահառուների ցանկում՝ այդպիսով բարձրացնելով նրանց տրամադրվող սոցիալական երաշխիքների մակարդակը:**

11. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1636-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում ապահովվել է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1636-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանձնաժողովների գործունեության անընդհատությունը:

12. Մշակել, շրջանառել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 19-ի N 1015 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների նախագծերը, որոնց ընդունման արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հաստիքների քանակը կրճատվել է 162 միավորով, իսկ կրճատված բժշկական օգնության և սպասարկման անձնակազմի համար նախատեսված հաստիքները տրամադրվել են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

13. Մշակել, շրջանառել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 19-ի N 1015 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների

նախագծերը, որոնց ընդունման արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հաստիքների քանակը կրճատվել է 162 միավորով, իսկ կրճատված բժշկական օգնության և սպասարկման անձնակազմի համար նախատեսված հաստիքները տրամադրվել են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

14. Մասնակցել եմ Հայաստանում կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում տեսազանգերի անցկացման մասին» կանոնակարգի մշակման աշխատանքներին:

15. ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել համալիր վերլուծություն «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամից հացի գնման գործընթացն մեկ անձից գնման ձևով իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ:

16. Ներկայացրել եմ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության առաջարկությունները:

17. ՀՀ ոստիկանության հոսպիտալի ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրման նպատակահարմարության պարզման նպատակով տեղում իրականացրել եմ հետազոտություններ և արդյունքները ներկայացրել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

18. Համակարգել և իրականացրել եմ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող

խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշումից բխող շուրջ 15 միջոցառումների կատարումը:

19. Մշակել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացություն:

20. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

21. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են «Ենոքյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 10761/16 գանգատի շրջանակներում բարձրացված հարցադրումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը՝ համապատասխան ապացույցներով (տեղեկանքներ, լուսանկարներ):

22. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացրել «Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 54684/19 գործով անհրաժեշտ տեղեկատվությունը:

23. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացրել «Մայրապետյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 43/19 գանգատի կապակցությամբ անհրաժեշտ տեղեկատվությունը:

24. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

25. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի N 34-Ն հրամանում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանի նախագիծը, որի ընդունման շնորհիվ լուծվեցին մի շարք խնդիրներ դատապարտյալների տեղաբաշխման հետ կապված:

26. Մշակել և շրջանառել են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

27. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 350-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

28. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

29. Լրամշակել են «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի որոշման նախագիծը:

30. Մշակել և շրջանառել են «Քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու» պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու ու քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ

պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

31. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել 2020 թվականի հունվար-փետրվար ամիսներին Արդարադատության նախարարության իրավասության ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ տեղեկանքը:

32. Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներին քրեակատարողական հիմնարկներից դատական նիստերին մասնակցելու համար դատարաններ, ինչպես նաև նրանց մասնակցությամբ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու նպատակով քրեական վարույթ իրականացնող մյուս մարմինների գտնվելու (տեղակայման) վայրեր փոխադրելու (ուղեկցորդելու) և այդ վայրերում դատապարտյալների պահպանությունն ապահովելու և իրականացնելու կապակցությամբ ծագած խնդրի շրջանակներում իրականացրել եմ միջազգային և ներպետական փորձի ուսումնասիրություն, մասնակցել քննարկումներին, ներկայացրել խնդրի լուծման ուղղված նախընտրելի տարբերակներ համապատասխան վերլուծյուններով, որը թույլ է տվել հասնել ցանկալի արդյունքին:

33. Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) զեկույցով բարձրացված հարցերի և խնդիրների լուծմանն ուղղված քայլերի վերաբերյալ ներկայացրել եմ անհրաժեշտ տեղեկատվությունը:

34. Մի քանի անգամ մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով տարբեր ժամանակահատվածներում վերացվեց կամ հաստատվեց ազատությունից զրկված անձանց հետ տեսակցությունների ընդհանուր արգելքը:

35. Մասնակցել եմ ՀՀ ԱԺ Նոր կորոնավիրուսի (COVID 19) տարածումը կանխելու, այդ վիրուսի դեմ պայքարի, համաճարակի հետևանքների մեղմման կամ վերացման ուղղությամբ Կառավարության և Պարետատան իրականացրած միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև արտակարգ դրության ժամանակահատվածում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումների արդյունավետությունն ու իրավաչափությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի կողմից տրամադրված հարցաշարով բարձրացված հարցերի վերաբերյալ պատասխանների մշակման աշխատանքներին և այլն:

Հարկանշական այլ գործողություններ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել են նաև հետևյալ աշխատանքները.


➤ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված հրատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվություններին ի պատասխան ներկայացրել են ՀՀ ԱՆ պաշտոնական 80 մեկնաբանություններ:

➤ Կազմել են ՀՀ արդարադատության նախարարության ուղղված գրությունների 150 պատասխան նախագիծ:

➤ Պատասխանել են տեղեկատվության տրամադրման հարցման 70 գրությունների և այլն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝**



ՄԻՇԱ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ